ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի ապրիլի 30-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 698000 ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների շենքերի տեխնիկական վիճակի մասին եզրակացության ծառայությունների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արմեն Խաչատրյանի 2025 թվականի ապրիլի 7-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 900000 ՀՀ դրամ տեղափոխել 05.4.1 ծրագիր 5131 հոդված՝ Սիսիան քաղաքում ծառատունկ անցկացնելու նպատակով մշտադալար ծառատեսակների ձեռքբերման համար /եղևնի, սոճի, տուա, կանգնող վարդեր/:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Երվանդ Եղիազարյանի 2025 թվականի մայիսի 6-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 380000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան և Մոնտելիմար քույր քաղաքների բարեկամության հուշաքարի տեղադրման և բարեկարգման աշխատանքների համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի մայիսի 6-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 500000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 5122 հոդված՝ Սիսիանի համայնքապետարանի վարչական շենքի համար ՀՀ գերբի ձեռքբերում:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /իրավաբան/ Սուսաննա Սահակյանի 2025 թվականի մայիսի 5-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 48130 ՀՀ դրամ տեղափոխել 01.3.1 ծրագիր 4831 հոդված՝ ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Սիսիանի տարածաշրջանի բաժանմունքում հարուցված թիվ 13434473 կատարողական վարույթի շրջանակներում բավարարված հայցապահանջին համամասնորեն հաշվարկված պետական տուրքի վճարումը կատարելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքի և <<Մարդը կարիքի մեջ>> բարեգործական հասարակական կազմակերպության միչև 2025 թվականի ապրիլի 16-ի կնքված աջակցության տրամադրման համաձայնագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

1. Սիսիան համայնքի կարիքների համար հարմարեցված տրանսպորտային միջոց ձեռքբերելու համար 10.7.1 ծրագիր 5121 հոդվածում ավելացնել 15.498.000 (տասնհինգ միլիոն չորս հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ, որը տրամադրվում է <<Մարդը կարիքի մեջ>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից և պլանավորվում է նաև վարչական բյուջեի /ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆ. ԿԱՊ. ԾԱԽՍ. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎԱԾ ՄՈՒՏՔԵՐ՝ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆԵՐՔԻՆ ԱՂԲ-ՆԵՐԻՑ)/ եկամտային մասում:

Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 18-ի թիվ 046-Ա որոշումը, ինչպես նաև <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Վարդանյանի 2025 թվականի մայիսի 5-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 669600 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 4511 հոդված՝ <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով «Սիսիան համայնքի տրանսպորտ» ՀՈԱԿ -ի տնօրեն Դավիթ Խաչատրյանի 2025 թվականի մայիսի 6-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի 06.3.1 ծրագիր 4251 հոդվածից 64015327 ՀՀ դրամ և 09.5.1 ծրագիր 4251 հոդվածից 12454173 ՀՀ դրամ գումարները ընդամենը

1. 76469500 ՀՀ դրամ տեղափոխել 04.5.1 ծրագիր 4511 հոդված՝ «Սիսիան համայնքի տրանսպորտ» ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ -ի տնօրեն Դավիթ Մարգարյանի 2025 թվականի մայիսի 6-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 1798890 ՀՀ դրամ տեղափոխել 05.4.1 ծրագիր 4511 հոդված՝ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ -ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

06.05.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 15.498.000 (տասնհինգ միլիոն չորս հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

06.05.2025թ.